

2 Օգոստոս

Հայկական խնդրոյն վրայօք առնուած յաջող լուրերուն վրայ մայրաքաղաքիս բոլոր ազգայինները կ'ատրաստուին Հայաստանի կուսակալ ըլլալու:

Ամբակում աղան, որուն ճակատէն վաթսունչորս ձմեռներ անցած են, քանի մը օրէ ի վեր զինուորական վարժութիւններու կը պարապի այնպիսի փափագով եւ եռանդով, որ ո՛չ սենեակը մտնողները կտեսնէ, ո՛չ ալ անոնց խօսքերուն կ'ատասխանէ:

Կինը կարծելով թէ ամուսինն խելագարուած է՝ բժիշկը կանչել կուտայ:

Երկու ժամէն ետքը կու գայ բժիշկն, որ ըստ բժշկական սովորութեան կ'հարցունէ. «ո՞վ է հիւանդը»:

Գիտէք արդէն, որ Հիպոկրատի սաներն այն ատեն կճանաչեն հիւանդներն՝ երբ ասոնք մատով ցուցուին իրենց: Երկու քաջառողջ մարդերու քով հիւանդ մը դիր եւ հարցուր բժշկին.

Ո՞վ է հիւանդը, տէր բժիշկ:

Յայտնի է որ այս է, պիտի պատասխանէ քեզ, ցոյց տալով այն մարդն, որ երկաթի պէս քաջառողջ է:

Հիւանդութիւններն ալ այն ատեն կճանաչեն՝ երբ հիւանդը մեռնի: Չկայ մեռեալ մը՝ որուն ի՛նչ հիւանդութենէ մեռած ըլլալն չհասկցուի, ինչպէս որ չկայ հիւանդ մը՝ որուն ի՛նչ հիւանդութենէ բռնուած ըլլալը հասկցուի: Շիշմանեան՝ խղճահար ըլլալուն պատճառաւ էր որ հրաժեշտ տուաւ բժշկական արհեստին եւ գրկեց գրականութիւնն, որ մարդ չմեռցունէր:

Մեր խնդիրէն քիչ մը հեռացանք. մօտենանք անոր:

Բժիշկը կ'առաջնորդուի Ամբակում աղային սենեակը:

–Բարեւ, Ամբակում աղա, կ'ըսէ բժիշկը:

–Մէկ, երկու, երեք, կ'ատասխանէ Ամբակում աղան, որ աւելի կոթ մը բռնած՝ վարժութիւն կ'ընէ:

–Ի՞նչպէս էք, Ամբակում աղա:

–Մի՛ ձախ, մի՛ յաջ...

–Ձեզի խօսք մը ունէի ըս...